ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 հունիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

75
(2925)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՆՉՈՒ ԵՆ ՎԱԽԵՆՈՒՄ «ՆԱԽԿԻՆՆԵՐԻ» ՎԵՐԱԴԱՐՁԻՑ

Քաղաքական դաշտում յուրաքանչյուր ակտիվության ժամանակ Նիկոլ Փաշինյանը շրջանառում է թեզեր, թե այս կամ այն առաջնորդը ուղիղ կամ անուղղակի ղեկավարվում է «նախկինների» կողմից: Ու, հետեւաբար, հարց է առաջանում՝ ինչու են ներկա դերակատարները վախենում «նախկիններից»: Պարզ է, որ ցանկացած փոփոխության դեպքում՝ խոսքը իշխանափոխության մասին է, այն իր հետ բերելու է ծանր հետեւանքներ հայրենիք հանձնող ՀՀ գործող իշխանության համար: Սակայն, հատկապես «նախկինների» վերադարձի դեպքում, անխուսափելի է լինելու առավել դաժան պատիժը գործողների նկատմամբ, որոնք իրենց գործունեության 6 տարիներ ընթացքում հայկական երկրորդ հանրապետությունը հանձնեցին թշնամուն, տվեցինք մոտ 5000 զոհ, եւ նրանք շարունակում են ամենակոռումպացված ձեւով իշխանավարել՝ ոչնչացնելով մեր երկրում բոլոր տեսակի արժեքները:

Ահա թե ինչու են գործող իշխանությունները հատկապես «նախկիններից» վախենում. նրանք առավել դաժան են պատժելու գործողներին:

2021 թվականի հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ցուցակով ընտրված, ՀՀ ԱԺ 8-րդ գումարման պատգամավոր Սիսակ Գաբրելյանը 2023 թվականին ձեռք է բերել նոր մեքենա՝ 12 մլն դրամ արժողությամբ. այն 2022 թվականի արտադրության է, VOLKSWAGEN մակնիշի: Մինչ այս Սիսակ Գաբրիելյանը 2021 թվականին ձեռք էր բերել 2018 թվականի արտադրության HYUNDAI մակնիշի ավտոմեքենա, որը 2023 թվականի ընթացքում վաճառել է 8 մլն դրամով: Որպես տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույք՝ պատգամավորը հայտարարագրել է 1 բնակարան բազմաբնակարան շենքում՝ ձեռք բերված 1987 թվականին Երեւանի Շենգավիթ վարչական շրջանում եւ անհատական բնակելի տուն՝ ձեռք բերված 2021 թվականին Շիրակի մարզի Գյումրի համայնքում: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնից հասկանում ենք, որ Գաբրիելյանի հիփոթեքով ձեռք բերված բնակարանի մայր գումարի մնացորդը կազմել է 17 մլն 990 հազար դրամ, որին կից նշումների բաժնում պատգամավորը գրել է. «2018 թ. ձեռք եմ բերել կառուցապատողից բնակարան, այն դեռ պատրաստ չէ»: ԱԺ պատգամավոր եւ նախկին լրագրող Սիսակ Գաբրիելյանի բանկային հաշիվների մնացորդները նախորդ՝ 2022 թվականի համեմատ աճել են գրեթե 1 մլն դրամով, իսկ կանխիկ դրամական միջոցներ պատգամավորը չի հայտարարագրել: Սիսակ Գաբրիելյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 25 մլն 870 հազար դրամ, որից 4 մլն դրամը վարկ է «Հայէկոնոմբանկ»-ից, 8 միլիոնը մեքենայի վաճառքից ստացված գումարն է, իսկ 1 մլն 940 հազար դրամը ստացել է ՀՀ ֆինանսների նախարարությունից:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔՊ-ն, գործի դնելով ձեռքի տակ ունեցած ողջ ռեսուրսները, որոշել է «հաշվեհարդար» տեսնել հայ առաքելական Եկեղեցուց: Թեեւ «թավշյահեղափոխականները» դեռ 2018թ.-ին՝ իշխանության գալուց անմիջապես հետո էին արշավ սկսել ընդդեմ Հայոց եկեղեցու եւ Վեհափառի՝ «նոր Հայաստան, նոր հայրապետ»... Բայց այն բանից հետո, ինչ Եկեղեցին իր բողոքի ձայնն է բարձրացնում հայրենիքի մաս-մաս հանձնման դեմ, ՔՊ-ականներն այլեւս անթաքույց ու ամբողջ ռեսուրսով հարձակման են անցել ընդդեմ եկեղեցու: Նախ տարբեր առիթներով հեգնում եւ թիրախավորում են Վեհափառին եւ հոգեւորականներին, խայտառակ ձեւով խոչընդոտում են Վեհափառի մուտքը Սարդարապատի հուշահամալիր, եկեղեցու կողմից բարձրացված բողոքի ձայնի ֆոնին «հանկարծ» հիշում են եկեղեցին հարկելու մասին: Այս ամենը, սակայն, ՔՊ-ին բավարար չէ, որոշել են տարբեր միջոցներով կռիվ տալ եկեղեցու դեմ: Երեկ ԱԺ-ում ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանը, որն ԱԺ ամբիոնից 2021 թվականին հպարտորեն հայտարարում էր, որ աթեիստ է, առաջարկել է փակել հոգեւոր-մշակութային ուղղվածություն ունեցող «Շողակաթ» հեռուստաալիքը, որով հիմնականում Աստվածաշնչյան եւ կրոնական հաղորդումներ են ցուցադրվում: ՔՊ-ական պատգամավորն առաջարկում է «Շողակաթին» հատկացվող գումարը տրամադրել իրենց «խոսափողը» հանդիսացող Հ1-ին: «Չի՞ լինի՝ այդ 206 միլիոնը տանք Հանրայինին, ինքը հարստացնի իր մշակութային, կրթական հաղորդումների բազան, ավելի շատ պրոդուկտ տա ու «Շողակաթի» հարցը փակենք ընդհանրապես», - երեկ ԱԺ-ում դիմելով Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ Արա Շիրինյանին՝ հայտարարեց ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանը: Այս ամենից կարող ենք մի հետեւություն անել՝ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը գրեթե բոլոր ոլորտների հետ «հաշվեհարդար» տեսել է, հիմա հերթը հասել է եկեղեցուն:

ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի դեմ հարուցված քրեական գործով՝ Արեգասարի բարձունքի հանձնման գործընթացի քննության շրջանակում Հակակոռուպցիոն դատարանը ծանուցումն այս անգամ ուղարկել է Արցախի «Եղնիկներ» զորամասի փոխգնդապետ Սերոբ Բազիկյանին: «Եղնիկներ» զորամասի հրամանատար, Արցախի հերոս Կարեն Ջալավյանին՝ Քյոխին հարցաքննելուց հետո՝ հերթը նրանն է: Նշենք, որ գործը քննվում է դռնփակ դատական նիստի շրջանակում: Հիշեցնենք, որ Արցախի ՊԲ հրամանատար Միքայել Արզումանյանը մեղադրվում է 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9 ընկած ժամանակահատվածում Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում իր ծառայողական պարտականությունների նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսեւորելու համար, ինչի հետեւանքով, ըստ քննչական կոմիտեի՝ հակառակորդի զինված ուժերն ամբողջությամբ իրենց վերահսկողության տակ են վերցրել Շուշի քաղաքը եւ մատույցները, հայկական ստորաբաժանումներն ունեցել են զոհեր եւ վիրավորներ:

ԶՐՈՒՅՑ

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՀԱՋՈՂ ՓՈՐՁ Է ՀԱՄԱՐՈՒՄ

Անցյալ շաբաթ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Արցախի՝ նախկինում՝ Իվանյան, այժմ՝ Խոջալու վերանվանված քաղաք տեղափոխված ադրբեջանցիների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ Հայաստանը պետք է ճանաչի եւ ներողություն խնդրի այսպես կոչված «Խոջալուի ցեղասպանության» համար:

«Հայաստանն ինքը պետք է դա ընդունի, պետք է ներողություն խնդրի մեզնից», - ասել է Ալիեւը եւ հավելել. «Եթե նրանք դա չանեն, ապա կարծում եմ՝ Հայաստանը երբեք չի կարողանա ոտքի կանգնել»:

Ադրբեջանի նախագահը իր ելույթի ընթացքում նաեւ կարծիք է հայտնել, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ, չնայած հաջողվել է Հայաստանին լուրջ պարտության մատնել, սակայն դեռեւս տարածքային պահանջների փորձեր են կատարվում:

«Վստահ եմ, որ Հայաստանն այլեւս երբեք չի փորձի որեւէ ռազմական սադրանք իրականացնել Ադրբեջանի դեմ: Մենք նաեւ հետեւում ենք վերջին իրադարձություններին, տեսնում ենք, որ փորձեր են արվում հերթական անգամ տարածքային պահանջներ ներկայացնելու մեր նկատմամբ: Չնայած՝ Հայաստանում ռեւանշիստները բավականին շատ են. ուստի մենք պետք է պատրաստ լինենք ցանկացած պահի», - ասել է Ալիեւը:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, մոտ մեկ շաբաթ առաջ Ադրբեջանի նախագահը հերթական մտացածին հայտարարությունը արեց՝ ասելով, որ հայկական կողմը պետք է ներողություն խնդրի հայկական ջարդերի համար, որին հայկական կողմից որեւէ արձագանք չի հաջորդել:

-Բաձարձակ համաձայն չեմ Ձեզ հետ, որ արձագանք չի եղել, եթե չեմ սխալվում, մեր պաշտոնական գերատեսչությունները, ԱԳՆ-ն արձագանքել են: Որքանով որ ես եմ տեղյակ, արձագանքել են եւ ԱԳՆ-ի հայտարարությանը որպես աշխարհի հետ շփման մեր գլխավոր խողովակ. ինքս ավելացնելու բան չունեմ:

-Մինչ մենք անդադար խոսում ենք խաղաղության մասին, Ադրբեջանը նոր պահանջներ է դնում՝ «Սահմանադրություն փոխե՛ք», «Խոջալուի ջարդերը ճանաչե՛ք»:

-Տավուշում մենք բազմաթիվ դժվարությունների գնով իրականացրինք եւ իրականացնում ենք սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքներ եւ, երբ Հայաստանի Հանրապետությունը խոսում է խաղաղության մասին, ապա այդ խաղաղությունը գործնականորեն արտահայտվում է հենց այս գործընթացներում: Հորդորում եմ հանրությանն ու լրագրողներին՝ կենտրոնանալու այն քայլերի վրա, որոնք կատարվում են: Խաղաղության պայմանագրի հիմքում ընկած է այդ ամբողջ գործընթացը, մենք պետք է տվյալ հարցերը պարզենք, սահմանագծենք եւ խաղաղության պայմանագիրը, որը բանակցվում է, լիահույս եմ՝ որ հաջողվելու է ավարտին հասցնել:

-Պարոն Հակոբյան, սակայն այդ ամենը քաղաքացիների իրավունքների ոտնահարմամբ է կատարվում: Ահազանգերը շատ են, որ առանց զգուշացնելու մոտենում եւ քանդում են իրենց տները:

Դա բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Խնդրում եմ այդ թեզը չտարածել: Նախ՝ բազմաթիվ հանդիպումներ են եղել քաղաքացիների եւ պետության ղեկավարի միջեւ, եւ պետական գերատեսչությունների ներկայացուցիչները 24 ժամյա գրաֆիկով գտնվում են այնտեղ, պատասխանում են բոլոր հարցերին: Ուզում եմ նշել նաեւ, որ մեր գյուղացիների հետ ամեն բան համաձայնեցված է եւ չպարզաբանված ու չմեկնաբանված հարց չկա:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրեթե 3 տարի ղեկավարելով շրջակա միջավայրի նախարարությունը՝ Հակոբ Սիմիդյանը զգալի ավելացրել է սեփական եկամուտները:

2021 թվականի դեկտեմբերի 10-ից ստանձնել է նախարարի պարտականությունները եւ առ այսօր ստացել տարեկան 20 մլն դրամ, սակայն այս տարի 2023 թվականի հայտարարատու տարվա եկամուտների, գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրում Սիմիդյանի աշխատանքի վարձատրությունը ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից կազմել է 21 մլն 323 հազար դրամ: Նախորդ տարվա հայտարարագրում աշխատանքի վարձատրությունը կազմել է 20 մլն 676 հազար դրամ:

Ստացվում է, որ մեկ տարում շրջակա միջավայրի նախարարի աշխատանքի վարձատրությունը ավելացել է գրեթե 647 հազար դրամով:

Նախարարի կանխիկ դրամական միջոցները կազմել են 500 հազար դրամ, բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 931 հազար դրամ:

Հակոբ Սիմիդյանը ամուսնացած է, ունի 1 երեխա, սակայն հայտարարագրում համատեղ բնակվող անձանց մասին որեւէ տեղեկություն չկա:

Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում՝90 օրից ավելի, փաստացի տիրապետվող 1 անշարժ գույք՝ բնակարան է հայտարարագրվել:

Հակոբ Սիմիդյանը հայտարարագրել է 2013 թվականին գնված 1991 թվականի արտադրության BMW մակնիշի մեքենա, որը բոլոր հայտարարագրերում ներկայացված է:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 5 մլն 757 հազար դրամ, որը դեռ 2022 թվականի հայտարարագրում առկա՝ «ՀայԷկոնոմ» բանկից ստացված 8 մլն դրամ վարկի մնացորդն է:

Հակոբ Սիմիդյանը 2014 թվականից ստանձնել է «ԼԵ ՏԻՍԻՄ» ՍՊԸ-ի 30% բաժնեմասի կառավարումը, սակայն միայն 2023 թվականին հավատարմագրման է հանձնվել «ՄԱԳՆԻՏ 2020» ՍՊԸ-ին:

Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ «ԼԵ ՏԻՍԻՄ» ՍՊԸ-ն զբաղվում է «Մեծածախ եւ մանրածախ առեւտրով. Ավտոմեքենաների եւ մոտոցիկլետների նորոգում», առավել մանրամասն այն զբաղվում է այլ մանրածախ առեւտրով ոչ մասնագիտացված խանութներում: Իսկ «ՄԱԳՆԻՏ 2020» ՍՊԸ-ն զբաղվում է «ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող լրացուցիչ այլ գործունեություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում» գործունեությամբ: ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրից տեղեկանում ենք, որ ընկերությունը գրանցված է ոմն Կարեն Մարտիրոսյանի անունով:

Ընկերության տնօրենը «Երեւանի ոսկերչական ֆաբրիկա» ՍՊԸ-ի 50% բաժնետեր Լեւոն Գագիկի Սարգսյանն է: Հավելենք, որ այս ընկերությունը տարածք է վարձակալել հայտնի «Ծաղկի շուկայի» կայանատեղիում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԱՂԱՆԻՍՈՒՄ ԱԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Տավուշի մարզի Բաղանիս գյուղում սահմանազատումն ավարտվել է արդեն:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Բաղանիս գյուղի վարչական շրջանի ղեկավար Գեւորգ Սահակյանը:

Հարցին, թե այդ հատվածում շա՞տ են զիջումները եղել, Սահակյանն ասաց. «Այդ հարցին դժվար է պատասխանել, քանի որ տեղյակ չեմ, ես ասել եմ, որ զինվորի արյունով գրած սահմաններն եմ ճանաչում, նոր սահմանները ես չեմ ճանաչում»,-ասաց նա:

Հիշեցնենք, որ Տավուշի մարզի Բաղանիս վարչական շրջանի ղեկավար Գեւորգ Սահակյանը հրաժարվել էր միանալ Տավուշում սահմանազատման աշխատանքներ իրականացնող աշխատանքային խմբին:

ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴԻՑ

Սյունիքի մարզի Ներքին Հանդից ռուս սահմանապահները դուրս են եկել: Այս մասին լրագրողներին ասաց Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը:

«Որտեղ տեղակայվել էին 44-օրյա պատերազմից հետո՝ դուրս են եկել, Ներքին Հանդից էլ են դուրս եկել, հիմա այնտեղ ռուս սահմանապահներ չկան»,-ասաց նա:

Հարցին՝ կա՞ն տեղեր, որ դուրս չեն եկել՝ մարզպետն ասաց, թե հստակ չի կարող ասել:

«Տեսեք՝ եթե կա ինչ-որ տեղ, որտեղ եղել են, կարող է 80 տոկոսը դուրս գա, մյուսները մնան, մինչեւ հաջորդները դուրս գան, չեմ կարող հստակ ասել, բայց Ներքին Հանդից դուրս են եկել»,-ասաց Ռոբերտ Ղուկասյանը:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԻՏԻ ՏԱՆ ՆԱԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Հունգարիայի արտաքին գործերի եւ առեւտրի նախարար Պետեր Սիյարտոն հայտարարել է, որ բացի Հայաստանից, խաղաղության եվրոպական հիմնադրամի աջակցությունը պետք է տրամադրվի նաեւ Ադրբեջանին: Նա այս մասին ասել է Բաքվում իր ադրբեջանցի գործընկեր Ջեյհուն Բայրամովի հետ համատեղ ասուլիսում:

Նա անդրադարձել է Խաղաղության եվրոպական հիմնադրամի կողմից Հայաստանին 10 մլն դոլարի չափով օգնության հարցին:

«Մենք կարծում ենք, որ նույն օգնությունը պետք է ցուցաբերվի նաեւ Ադրբեջանին», - ասել է հունգարացի նախարարը:

Սիյարտոն հավելել է, որ հիմնական խնդիրը, որի վրա Հունգարիան աշխատելու է որպես Եվրամիության խորհրդի նախագահ, կլինի աջակցելը պետությունների միջեւ խաղաղության եւ համագործակցության հարցերում նախաձեռնություններին:

ՇԱՐԺՈՒՄՆ ՈՒՂԵՎՈՐՎԵԼ Է ՎԱՐԴԵՆԻՍ



«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ սրբազանն ու աջակիցները երեկ ավտոերթով ուղեւորվում են դեպի Վարդենիս՝ հանրահավաքի: Լրագրողների հետ ճեպազրույցում Բագրատ սրբազանը, անդրադառնալով Տավուշում սահմանազատված հատվածում ադրբեջանական դրոշի ծածանմանը, ասաց՝ մեր շարժումն ու պայքարն այն մեծ ահազանգն է, թե ինչ է տեղի ունենալու ամբողջ Հայաստանում. «Այս պատճառով ենք նաեւ գնում Վարդենիս, որովհետեւ եթե իրապես բարեմտություն ու փոխգործակցություն կա այսպես կոչված սահմանազատման, սահմանագծման, խաղաղության պայմանագրի գործընթացում, ինչո՞ւ մեր երկրից երկու տարի առաջ գրաված տարածքները չեն զիջվում՝ հետ քաշվելով, այլ, 90-ականների խնդիրն արծարծելով, հասցրել են այսօրվան: Ուրեմն խնդիրը հետեւյալն է՝ միակողմանի ուժի, վախի, սպառնալիքների տակ անընդհատ զիջումներ անել»: Սրբազանի խոսքով՝ Վարդենիս այցի նպատակը իրազեկելն է, մարդկանց ցույց տալն ու հասկացնելը, թե ինչ իրավիճակում ենք գտնվում, ինչ է լինելու շարունակությունը: Նա ասաց, որ նախնական՝ ծրագրել էին վաղը այսօր մեկնել Սյունիք, սակայն ուրբաթ օրը շատ կարեւոր ծրագիր ունեն, չեն հասցնի վերադառնալ Երեւան ու պատրաստվել. «Շատ կարեւոր, առանցքային ծրագիր ունենք»:

Սրբազանն ասաց, որ այժմ շարժումը մտնում է 3-րդ փուլ, եւ այն պետք է դառնա փոփոխությունների փուլը. «Ինձ շատ են ասում, թե ասում էի՝ յոթից տասը օրում կանենք... այո ,ասել եմ, բայց այդ 7-10 օրում հասկացանք, որ մենք շատ ավելի մեծ խնդիրների առջեւ ենք կանգնած: Մեր առջեւ աշխարհաքաղաքական խնդիրներ, մարտահրավերներ կան: Մեր փափագն է եղել հասնել նշակետին, չենք խաբել ու չենք խաբելու»: Հարցին՝ իշխանամերձ փորձագետներն ասում են, թե շարժումը մաշեցվում է, սրբազանը պատասխանեց. «Այդ քաղաքագետներին եթե մենք գումար տանք, իրենք կասեն՝ շարժումը համաշխարհային նշանակություն ունի: Այդ մարդիկ փող աշխատող մարդիկ են, նրանց համար ոչ երկիր կա, ոչ հայրենիք, իրենց համար՝ իրենց տրված արծաթն է ու որովայնը: Այսօր ամերիկյան քարոզչության մեջ են, վաղը Ռուսաստանից գումար կստանան, Ռուսաստանի մասին են խոսելու նույն ջանասիրությամբ: Այս մարդիկ սրբություն չունեն, հայրենիք չունեն, վաղն էլ կթողնեն, կգնան երկրից: Փորձագետ չեն, նրանք փորձանքաբերներ են, մի փոքրիկ խումբ են, որ իրենց առաջ խոսենք, կչորանան տեղում»:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ «ՃԱՇԱԿԻ»

ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԱՐՍԻ ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵՑ

Այս տարվա փետրվարի 27-ին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հայտարարեց, որ իր եղբոր կնոջ նկատմամբ հարուցված մեղադրանքը սխալմունք է: Սակայն կարճ ժամանակ անց, պարզվեց, որ ԱԺ նախագահն էր սխալվում. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հարսը ընդունել է մեղքը եւ իր փաստաբանի միջոցով խնդրել է դատախազությանը գործուն զղջման հիմքով կարճել հարուցված վարույթը:

Հիշեցնենք, որ 2024 թվականի հունվարի 31-ին ԱԱԾ-ն ու ՔԿ-ն խուզարկություններ էին կատարել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում եւ մի շարք անձանց բնակարաններում (ընդհանուր առմամբ՝ ավելի քան 15 վայրում):

Ըստ ՔԿ-ի՝ պարզվել էր, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձինք «Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծման» մրցույթի շրջանակում օժանդակել են, որ մրցույթում իրենց նախընտրած մասնակիցը հաղթի եւ մրցույթի մյուս մասնակից հիմնադրամի համար ստեղծել են խոչընդոտներ եւ նրան փաստացի հեռացրել մրցույթից: Դրա արդյունքում՝ մրցույթում հաղթող է ճանաչվել մրցակցից շուրջ երեք անգամ ավել՝ ավելի քան 392 մլն դրամ գնային առաջարկ ներկայացրած ընկերությունը:

Արդյունքում՝ վարույթի շրջանակում կալանավորվել էր Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը: Նրան ընդամենը 11 օր կալանքի տակ պահելով՝ կայացվեց քաղաքական որոշումը, եւ դատախազը 2024 թվականի փետրվարի 12-ին, սեփական նախաձեռնությամբ, փոխեց քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթով անցնող մեղադրյալներ՝ առեւտրային կազմակերպության աշխատակիցներ Ա.Գ.-ի (Անի Գեւորգյան) եւ Լ.Մ.-ի (Լիլի Մկրյան) նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը:

Դեռ հարսի կալանքի օրերին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հարցազրույց էր տվել լրագողներին՝ հայտնելով, թե սխալմունք է եղել իր հարսի մասով, նա անմեղ է:

«Ժողովուրդ» օրաթերթը փետրվարի 28-ին դեռ կանխատեսել էր, որ Ալեն Սիմոնյանը քաղաքական հրահանգ տվեց իրավապահներին:

Այսպիսով՝ քաղաքական հրահանգը կատարված է, սակայն իրավապահներն իրենց դեմքը փրկելու համար գործուն զղջման հիմքն են դրել կարճման որոշման մեջ: Գլխավոր դատախազությունից այս գործի մասով Armlur.am-ին հայտնեցին. «Նկատի ունենալով, որ ներքոնշյալ անձինք նախաքննության ընթացքում համագործակցել են քրեական հետապնդման մարմնի հետ, ամբողջությամբ ընդունել եւ չեն վիճարկել իրենց ներկայացված մեղադրանքները, դրանցում նկարագրված փաստական հանգամանքները՝ հսկող դատախազի կողմից նշված անձանց կողմից ներկայացված միջնորդությունների քննարկման արդյունքում՝ որոշումներ են կայացվել վերջիններիս նկատմամբ, գործուն զղջալու հիմքով, հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Մասնավորապես՝

2024 թվականի մայիսի 17-ին առեւտրային կազմակերպության աշխատակից Լ.Մ.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է՝ գործուն զղջալու հիմքով:

2024 թվականի մայիսի 20-ին առեւտրային կազմակերպության աշխատակից Ա.Գ.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է՝ գործուն զղջալու հիմքով:

2024 թվականի մայիսի 23-ին էկոնոմիկայի նախարարության աշխատակից Ա.Ս.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է՝ գործուն զղջալու հիմքով:

2024 թվականի մայիսի 27-ին էկոնոմիկայի նախարարության աշխատակից Ա.Ի.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է՝ գործուն զղջալու հիմքով:

2024 թվականի մայիսի 29-ին էկոնոմիկայի նախարարության աշխատակից Ս.Գ.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է՝ գործուն զղջալու հիմքով:

Բացի այդ, 2024 թվականի մայիսի 20-ին էկոնոմիկայի նախարարության աշխատակից Ա.Ղ.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է՝ մեղսագրվող արարքը վերջինիս կողմից կատարված չլինելու հիմքով»:

Այսպիսով՝ մեծ շոու բեմադրելով, ՀՀ Քննչական կոմիտեի ղեկավար Արգիշտի Քյարամյանը եւ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ցույց տվեցին հանրությանը, թե իրենք արդարադատություն են իրականացնում, եւ չկա տարբերություն, թե ով է մեղադրյալի բարեկամը: Սակայն, կարճ ժամանակ անց փշրվեց գործը եւ հերթական անգամ հանրությունը ականատես եղավ, որ մեր երկրում արդարադատությունը իրականացվում է ուղիղ քաղաքական իշխանության հրահանգներով եւ ճաշակով: Չկա օբյեկտիվ, ամբողջական, բազմակողմանի քննություն, կա քաղաքական պատվեր եւ վերջ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2021 թվականի հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ցուցակով ընտրված ՀՀ ԱԺ 8-րդ գումարման պատգամավոր Ռուստամ Բաքոյանը 2023 թվականին ֆինանսական միջոցներն այնքան է բարելավել, որ հասցրել է նոր բնակարան գնել:

Բազմաբնակարան շենքում գտնվող բնակարանը ձեռք է բերվել Երեւանում եւ արժեցել է 32 մլն 400 հազար դրամ:

Բաքոյանը մինչեւ այս բնակարանի ձեռքբերումն ուներ մեկ անհատական բնակելի տուն Վեդի համայնքում՝ ձեռք բերված 2019 թվականին:

Ռուստան Բաքոյանը հայտարարագրել է մեկ Nissan մակնիշի ավտոմեքենա, որը սեփականության իրավունքով պատկանում է այլ անձի:

ԱԺ պատգամավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 493 հազար դրամ եւ 20 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 28 հազար դոլար եւ 29 մլն 600 հազար դրամ:

Բաքոյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 43 մլն 539 հազար դրամ, որից 32 մլն 400 հազար դրամը վարկ է «ԱմերիաԲանկից»: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնից հասկանում ենք, որ նշված գումարը բնակարանի հիփոթեքի մայր գումարն է:

Ռուստամ Բաքոյանի աշխատանքի վարձատրությունը Ազգային ժողովի աշխատակազմից կազմել է 10 մլն 443 հազար դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2 մլն 234 հազար դրամ:

Պատգամավոր Բաքոյանը Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից ստանում է նաեւ 696 հազար դրամ կենսաթոշակ :

Հարցական է, թե երիտասարդ պատգամավորն ինչ համար է թոշակ ստանում:

Հիշեցնենք, որ Ռուստամ Բաքոյանը հեղինակել է մի նախագիծ, որով սահմանվում էր ամուսնության տարիքային շեմը 18-ից բարձրացնել, սակայն նախագիծը հանրային լսումների փուլից առաջ չի անցել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

«Օրեր առաջ Հայաստանից ստացել ենք խաղաղության պայմանագրի նոր նախագիծ. նշեմ, որ պայմանագրի նախագծի վերաբերյալ ավելի քիչ հարցեր են բաց մնում», - այս մասին Հունգարիայի իր գործընկերոջ հետ համատեղ ճեպազրույցում հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը:

«Որոշ կետերով դրական դինամիկա կա», - նշել է ադրբեջանցի նախարարը:

Նշենք, որ ՀՀ-ն պատասխանել է խաղաղության պայմանագրի նախագծի վերաբերյալ Ադրբեջանի վերջին առաջարկներին՝ ուղարկելով լրամշակված 9-րդ խմբագրությունը: Այս մասին լրատվամիջոցներին հայտնել է ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Անի Բադալյանը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԹԵԱԿԱՆՈՐԵՆ ԵՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՈՐՈՇՄԱՆԸ

Ինչպես ավելի վաղ գրել էր ArmLur.am-ը, ֆինչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ «ՀՀ ֆինչական կոմիտեի ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի ֆինչական բաժնում ֆինվող իրական վարույթի շրջանակներում իրականացված ֆինչական եւ վարութային ծավալուն գործողություններով՝ բացահայտվել են Արագած Ախոյանի կողմից խաբեության եւ, վստահությունը չարաշահելու եղանակով, ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություններ կատարելու մի քանի դեպքեր:

Մասնավորապես՝ նախաքննության ընթացքում ձեռք բերված տվյալների համաձայն՝ Ա.Ա.-ն, հանդիսանալով Երեւան քաղաքի Արաբկիր 43-րդ փողոցի 42/2 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի կառուցապատող եւ սեփականատեր, երկու ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն, 2010-2014թթ. ընթացքում 6 անձանցից բնակարաններ եւ ավտոկայանատեղիներ ձեռք բերելու դիմաց՝ ստացել է ընդհանուր 274.712.000 դրամ, մեկ դեպքում էլ, բնակարանը վերանորոգելու համար՝ 6800 ԱՄՆ դոլար գումար: Սակայն, հետագայում նշված գումարները մուտք չի արել ընկերությունների հաշվեհամարներին կամ դրամարկղ եւ հափշտակելով դրանք՝ տնօրինել է սեփական կարիքների համար: Այդ կերպ, քաղաքացիներին պատճառվել է առանձնապես խոշոր տարբեր չափերի գույքային վնաս:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Արագած Ախոյանի փաստաբան Բենիկ Գալստյանի հետ՝ պարզելու՝ արդյոք ընդունում է Ախոյանն իրեն առաջադրված մեղադրանքը:

Մեզ հետ զրույցում Ախոյանի փաստաբանն ասաց. «Մեղադրանքի մասով չի ընդունում մեղավորության մասը, այսինքն՝ նշվում է, որ սա քաղաքացիաիրավական խնդիր է՝ անձանց հետ պարտքային հարաբերություններ ունեն, ու այստեղ իրապես ուրիշ խնդիր ունենք: Տուժողների գերակշիռ մասը, այնպես է, որ գումարները վերցրել է, հետագայում որոշակի գումարներ հետ է վերադարձրել, ընդհանուր շրջանառություն է իրար մեջ տեղի ունեցել, ընդ որում՝ տուժողների մի մասը նշում է, որ բնակարան պետք է տրամադրվեր այդ անձանց, բայց չի տրամադրվել: Հիմա տուժող կա, որ, օրինակ, 4 բնակարան է գնել, որից, դիցուք, 2 բնակարանները տրվել են այդ տուժողին: Կամ տուժող կա, որին բնակարանը տրվել է, ավտոտնակը չի տրվել վերջնարդյունքում, ինչը պայմանավորված է հիմնական ընկերության սնանկության գնալով, ընդ որում՝ սնանկությունը եղել է հարկադիր սնանկություն»:

Փաստաբան Գալստյանից նաեւ հետաքրքրվեցին՝ կարո՞ղ է արդյոք այս ամենը համարվել քաղաքական հետապնդում, ինչին ի պատասխան՝ փաստաբանն ասաց, որ նման գնահատականներ չի ուզենա տալ:

«Չեմ ուզի նման գնահատականներ տալ, որովհետեւ Արագած Ախոյանի հետ էլ պետք է քննարկեմ ու հասկանամ: Միգուցե սա կարող է լինել այլատիպ վերաբերմունք անձի նկատմամբ: Ես իմ պրակտիկայում չեմ հանդիպել, բայց կան դեպքեր, երբ բազմաբնակարան շենքերի շինարարության խնդիր է եղել, անձը չի կարողացել իր պարտականությունները կատարել եւ նրա նկատմամբ նույնիսկ մեղադրանք է առկա, բայց խափանման միջոցը շատ ավելի մեղմ է: Այսինքն՝ այսպես ասած, այլ մոտեցման խնդիր, միգուցե, առկա է այս տեսանկյունից»:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Բենիկ Գալստյանն անդրադարձավ նաեւ նրան, թե ինչ կարող է սպասվել նախկին ԱԺ պատգամավորին:

Գալստյանի խոսքով՝ չի բացառում, որ տարբերակված մոտեցում կարող է լինել խափանման միջոցի տեսանկյունից, եւ կոնկրետ քրեական դատավարության տեսանկյունից էլի կան դեպքեր, երբ շենքի շինարարությունը խնդիր է եղել, անձինք մնացել են առանց իրենց բնակարանների բայց մարդկանց նկատմամբ խափանման միջոցները մեղմ են ակնհայտորեն, այսինքն՝ կալանք չեն առնվազն:

Հիշեցնենք, որ Արագած Ախոյանին, բացի վերը նշված մեղադրանքից, կան նաեւ այլ առաջադրված մեղադրանքներ:

2022 թվականի ապրիլի 24-ին Ա.Ախոյանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքի իր էջում հանրային հասանելի հարթակով, ուղիղ եթերի միջոցով, հրապարակել է տեսանյութ, որի ընթացքում, նկատի ունենալով նույն օրվա՝ ժամը 17:00-ի սահմաններում Երեւան քաղաքի Ֆրանսիայի հրապարակում քաղաքական ընդդիմության կողմից կազմակերպված հավաքի ժամանակ երկու քաղաքացիների միջեւ քաղաքական հայացքներով պայմանավորված տեղի ունեցած ծեծկռտուքը, բռնություն գործադրելու վերաբերյալ հրապարակաւ կոչեր է հնչեցրել՝ արդարացնելով նման բռնության հրապարակայնորեն գործադրումը:

Այս առիթով Ախոյանին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածի 1-ին մասով եւ որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել էր ստորագրությունը չհեռանալու մասին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԽԱՓԱՆՈՒՄ

4 ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

ՀՀ ֆինչական կոմիտեն հայտնել էր՝ մայիսի 31-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի դիմաց կազմակերպված ակցիայի ընթացքում մի խումբ անձանց կողմից կատարված խմբակային խուլիգանության առերեւույթ 5 մասնակիցների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով քրեական հետաքննություն հարուցվելու վերաբերյալ:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել էր, դատարան ներկայացնելու հիմքով, այդ անձանց ձերբակալելու վերաբերյալ որոշում: Նշված 5 անձանցից 4-ը ձերբակալվել է: Դատարան միջնորդություն է ներկայացվել՝ նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Միջնորդությունների քննարկման արդյունքում, դատարանի որոշումներով՝ նշված անձանցից 3-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, մեկի նկատմամբ՝ տնային կալանքը:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակում նշված անձինք մեղադրվում են այն բանի համար, որ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման շրջանակում, 2024 թվականի մայիսի 31-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի դիմաց կազմակերպված ակցիայի ընթացքում, նրանք, այլ անձանց հետ խուլիգանություն կատարելու ուղղակի դիտավորությամբ, հասարակության նկատմամբ անհարգալից, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, անտեսելով ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ վարքագիծ դրսեւորելու եւ հասարակական կարգը չխախտելու պահանջները՝ անպարկեշտ արտահայտություններ եւ հայհոյանքներ են հնչեցրել, շիշ եւ տարբեր առարկաներ նետել տեղում ծառայություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների եւ ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի ուղղությամբ:

Այդ ընթացքում խուլիգանության մասնակիցներից մի քանիսը, փոխլրացնելով միմյանց գործողությունները, իրենց մոտ գտնվող ծխարձակող առարկաները նետել են ոստիկանության ծառայողների ուղղությամբ. նրանցից մեկը ոտքով հարվածներ է հասցրել ոստիկանության աշխատակիցների շարքի ուղղությամբ, որոնք դիպել են ոստիկանության ծառայողներից մեկի ձեռքում գտնվող ոստիկանական վահանին: Այդ գործողությունների արդյունքում խախտվել է նշված վայրում գտնվող անձանց անդորրը, եւ խափանվել է հանրային միջոցառումը:

Նախաքննությունը շարունակվում է:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ «ՍՐՏԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ»

ԱԺ է ներկայացվել 3 դատավորի թեկնածություն, որոնք հավակնում են դառնալու Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր: Նրանք են՝ Արմեն Դանիելյանի, Ռուբիկ Մխիթարյանի եւ Մանվել Շահվերդյանի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններին ծանոթանալու մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ովքեր են նրանք:

Դատավոր Արմեն Դանիելյանը հանրության մեջ աչքի ընկավ ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին կալանավորելով: Եվ, առհասարակ, Արմեն Դանիելյանը սովորություն ունի անկատար չթողնել որեւէ ՔՊ-ականի ցանկություն:

Արմեն Դանիելյան

Առանց անձի մասին լսած լինելու, նրա իրավունքն ապահովելու՝ մարդուն կալանավորելու պրակտիկան Արմեն Դանիելյանը շարունակեց կիրառել: «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանը նրան ԱԺ ամբիոնից հիշեցրեց, թե ինչպես առանց իրեն լսելու կալանք իրականացրին: Արթուր Սարգսյանի վերաբերյալ կայացրած կալանքի որոշումն Արմեն Դանիելյանի համար դարձավ կարգապահական վարույթ հարուցելու թեմա, ԲԴԽ-ն, սակայն, 2022թ. մայիսի 12-ին, իհարկե, մերժեց Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արմեն Դանիելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը:

Նշենք, որ նա ԲԴԽ անդամ էր ընտրվել օրերս:

Թեկնածուներից Մանվել Շահվերդյանը հանրությանն առավել հայտնի դարձավ, երբ քնեց Նիկոլ Փաշինյանի որդու՝ Աշոտ Փաշինյանի առեւանգման գործը:

Մանվել Շահվերդյան

Իսկ ահա, դատավոր Ռուբիկ Մխիթարյանը հանրությանը առավել հայտնի դարձավ հայտնի գրագրությունից: Բանն այն է, որ դատական համակարգը լքեցին դատավորներ, որոնց հեռացման պատճառը խորը արմատներ ուներ: Մասնավորապես՝ Ռուբիկ Մխիթարյանի «թեթեւ ձեռքով» իշխանություններին է հասել գրագրություն, որտեղ դատավորները ներքին քննարկումներ են ունեցել, հայհոյանքներ են հնչել իշխանության հասցեին: Եվ ահա, ըստ մամուլի տեղեկությունների՝ գրագրությունը իշխանություններին հասցրել է Ռուբիկ Մխիթարյանը:

Ռուբիկ Մխիթարյան

Եվ ահա, դատական համակարգում այս քաոսից հետո, Մխիթարյանը ԲԴԽ անդամ դառնալու դիմումը հետ էր վերցրել, քանի որ դատական համակարգը բավականին քննադատաբար է մոտեցել նրա այս քայլին ու, առհասարակ, չեն շփվում նրա հետ. ուստի, գիտակցելով, որ նրան չեն ընտրի, վերջինս հրաժարվել էր գնալ ԲԴԽ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 114 դեպք, որից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՎՆԱՍՎԵԼԷ ԽԱՇԹԱՌԱԿԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Իջեւան համայնքի Խաշթառակ գյուղը գեղեցիկ բնություն ունի, բնակավայրը երբեմն կատակով կոչում են «Հայկական Հոլիվուդ», այդտեղ են նկարահանվել «Մենք ենք մեր սարերը», «Տղամարդիկ» ֆիլմերից հատվածներ եւ բազում այլ ֆիլմեր: Մայիսի 26-ի ջրհեղեղից միջպետական ավտոճանապարհը Խաշթառակ գյուղին կապող կամուրջը վնասվել է, այդտեղով երթեւեկն արգելված է: Խաշթառակի վարչական ղեկավար Անդրանիկ Վիրաբյանն ասաց, որ Իջեւանի համայնքապետարանը մասնագետների է հրավիրել, որոնք ուսումնասիրել են կամրջի վնասվածության աստիճանը եւ դրա վերականգնման հնարավորությունները: Իջեւանի համայնքապետարանը Խաշթառակը Իջեւան քաղաքին կապող այլընտրանքային ճանապահ է բացել: Այդ աշխատանքների շնորհիվ Խաշթառակից 7 կմ անցնելուց հետո՝ հասնում են Իջեւան քաղաքի «Ռեմբազի թաղ»: Համայնքապետարանն այժմ աշխատանքներ է կատարում այդ ճանապարհը բարեկարգելու, հարթեցնելու համար: Ա. Վիրաբյանն ասաց, որ խաշթառակցիների մեծամասնությունը գերադասում է ավտոմեքենայով հասնել վնասված կամուրջ, ոտքով անցել այն, կամրջի մյուս կողմում նստել Իջեւանից պատվիրած մեքենան:

ՀԵԲՈՍԻ ՈՐԴՈՒՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ ՀԱՐՑ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Երեւանում ցույցերին մասնակցելիս 72 ժամով ձերբակալել են սահմանամերձ Ոսկեպարից 2 երիտասարդների՝ Ալեն Աղբալյանին եւ Մանվել Ալավերդյանին: Նրանց ձերբակալման ժամկետը լրացավ հունիսի 3-ին. երիտասարդներն ազատ են արձակվել: Արենը Ռուսաստանում բնակվող ոսկեպարցի մեծահարուստ Յուրա Աղբալյանի եղբոր որդին է: Յուրա Աղբալյանը Ռուսաստանում բնակվող ոսկեպարցի 3 այլ հարուստների հետ 2021թ. հունիսի 20-ի խորհրդարանական ընտրություններից առաջ Ռուսաստանից Ոսկեպար էր եկել՝ ՔՊ-ի օգտին քվեարկելու համար ոսկեպարցիներին ուղղորդելու նպատակով, ինչն էլ նրանք արեցին: Սակայն Արեն Աղբալյանը դեմ է Նիկոլ Փաշինյանի կողմից սահմանազատման անվան տակ Տավուշի սահմանագոտուց Ադրբեջանին տարածքներ հանձնելուն: Մյուս ձերբակալվածը Ոսկեպարի լեգենդար հերոս, 1993 թվականին զոհված Հրաչ Ալավերդյանի որդին է՝ Մանվելը: Մանվելը այս տարվա մայիսի 25-ին Ոսկեպարում Նիկոլ Փաշինյանին հարց-մեղադրանք է ուղղել, ասելով. «Քո ռեժիմը ադրբեջանցիներին մոտեցրել է իմ տանը»: Ոսկեպարի բնակիչները կարծում են, որ այդ հարց-մեղադրանքի համար էլ Նիկոլ Փաշինյանը հրահանգել է ձերբակալել հերոս Հրաչ Ալավերդյանի միակ որդուն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐ

ԲԱՔՎԻ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ԿՈՉ

Բոննում անցկացվող Կլիմայի փոփոխության կոնֆերանսի համատեքստում Գերմանիայի քաղաքացիական ակտիվիստներն ու իրավապաշտպանները Ադրբեջանից եւ անձամբ նախագահ Իլհամ Ալիեւից պահանջել են ազատ արձակել հայ բանտարկյալներին: Բոննի այս կոնֆերանսի շրջանակում փորձագետները սահմանում են COP29-ի հանդիպումների օրակարգը, որը տեղի է ունենալու նոյեմբերին, Բաքվում:

Գերմանահայ կենտրոնական խորհրդի նախագահ Ջոնաթան Սպանբենբեգը կոչ է արել համաժողովի մասնակիցներին, միջազգային հանրությանը եւ իրավապաշտպան կազմակերպություններին ուշադրություն դարձնել այն փաստին, որ COP29-ն անցկացվելու է մի երկրում, որտեղ մարդու իրավունքները կոպտորեն խախտվում են:

«Ցավալի է, որ ՄԱԿ-ը նման կարեւոր կոնֆերանսը կազմակերպվում է մի երկրում, որտեղ մարդու իրավունքները ոտնահարվում են բոլոր հնարավոր վատթարագույն ձեւերով: Երկիր, որը ցեղասպան քաղաքականություն է վարում հայերի ու Հայաստանի նկատմամբ, որը բոլորովին վերջերս էթնիկ զտումներ իրականացվեց Լեռնային Ղարաբաղի 120 հազար հայերի նկատմամբ, որը հենց այս պահին ոչնչացնում է հայերի պատմական հուշարձանները: Երկիր, որը հենց այս պահին էլ Բաքվի բանտերում է պահում հայ բանտարկյալներին ու պատանդներին, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի նախկին ղեկավարներին: ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի, այսպես կոչված, օժանդակ մարմիններն հանդիպում են Բոննում: Այս կոնֆերանսը, որն անցկացվում է COP29-ին ընդառաջ, ընթանալու է մինչեւ հունիսի 30-ը. այստեղ են լինելու ավելի քան վեց հազար պատվիրակներ աշխարհի բոլոր անկյուններից, որոնք նախապատրաստելու են Բաքվում անցկացվելիք COP29-ի օրակարգը: Այս առիթով, մենք՝ որպես Գերմանահայ կենտրոնական խորհրդի ներկայացուցիչներ, առաջին նամակն ենք ուղարկել Գերմանիայի Բունդեսթագի բոլոր պատգամավորներին: Բոննում շաբաթվա ընթացքում լինելու են նաեւ ուրիշ գործողություններ:

Ի՞նչ կարող եք դուք անել: Առաջինը՝ դուք կարող եք ձեր սոցիալական մեդիայի էջերում գրառումներ անել՝ հասցեագրելով խնդիրը, նկարներ դնել COP29 հեշթեգով, անձնապես կապ հաստատել ձեր շրջանի պատգամավորի հետ՝ տալով նրան մի պարզ հարց. «Ի՞նչ եք անում Դուք, որ Բաքուն անհապաղ կերպով ազատ արձակի Բաքվի բանտերում պահվող հայ բանտարկյալներին ու պատանդներին, որոնք ցեղասպանության զոհեր են»: Կարող եք կապ հաստատել ձեր երկրների պատվիրակների, ՀԿ-ների եւ կլիմայի հարցերով ակտիվիստների հետ, որոնք մասնակցելու են Բաքվի կոնֆերանսին կամ որոնք այսօր մասնակցում են կամ առաջիկա շաբաթներին մասնակցելու են Բոննի կոնֆերանսին: Դուք ինքներդ կարող եք կազմակերպել ձեր երկրներում մեծ եւ փոքր բողոքի ակցիաներ, խրախուսել ձեր ընկերներին ոտքի ելնելու: Սա միայն հայերին վերաբերող խնդիր չէ, սա խնդիրը է, որը կարող է մտահոգել ցանկացած մարդու», - ասել է Ջոնաթան Սպանբենբեգը:

Նա նշել է, որ հաջորդ ակցիան Բոննում տեղի կունենա հունիսի 7-ին՝ Համաշխարհային կոնֆերանսների կենտրոնում:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՁՈՒՐԸ ԴԵՌ ՄԱՐԴԿԱՆՑ ԲԱԿԵՐՆ Է ԼՑՎՈՒՄ

Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի բնակիչ Էդուարդ Եղիազարյանը «Ժողովուրդ» օրաթերթին ահազանգում կրկին ահազանգում է:

Ինչպես 1 օր առաջ գրել էինք՝ Սիլիկյան թաղամասի առաջին փողոցի 2ա տան բակն ամբողջությամբ պատված էր անձրեւաջրով, որի պատճառը հարեւանի կողմից իրականացված զոդումն էր. դրա հետեւանքով ողջ ջուրը լցվում է տան բակեր:

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթին ահազանգած քաղաքացին պատմել է, որ այս անգամ էլ կոյուղու խողովակներն են վնասվել ու կոյուղաջրերը լցվում են բակ:

«Հենց հիմա խցանվել է խողովակը, ջուրը լցվում է բակ, մի քանի ժամ հետո կբարձրանա կլցվի տուն»:

Էդուարդի խոսքով՝ պատճառը հարեւանի արած աշխատանքն է:

«Ժողովուրդ» օրաթերթ կապ հաստատեց Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմի քարտուղար Գրիգոր Գասպարյանի հետ, վերջինս պատասխանեց, որ տեղյակ է խնդրից, կառուցապատողին կանչել են թաղապետարան՝ խնդրին լուծում գտնելու համար:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Հայաստանում նախատեսվող Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի վերջնական տարբերակը պատրաստ կլինի հուլիս ամսին:

Այս մասին ասաց Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության քննարկման ժամանակ:

Նա հիշեցրեց, որ 2023 թվականին ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը, որը «Ակադեմիական քաղաք» ծրագրի հիմնական իրականացնող մարմինն է:

«Հայեցակարգային աշխատանքներն իրականացվեցին «Ակադեմիական քաղաք»-ի պատկերացումը եւ հայեցակարգն ամրագրելու համար: Մենք նաեւ ունեցանք առաջին պայմանագրերը: Այս պահին արդեն պարզ է, որ հուլիսին կունենանք գլխավոր հատակագծի վերջնական տարբերակը»,-ասաց նախարարը:

Ջուգահեռաբար շրջանառվում են մի քանի նախագծեր, որոնք հնարավորություն են տալու պայմանագրեր ունենալ տրանսպորտային նախագծի հետ կապված, քաղաքի ամբողջական կառավարման, քաղաքաշինական զարգացման ուղղություններով: Բոլոր այս ուղղություններով նախարարությունն աշխատում է միջազգային գործընկերների հետ:

«Աշխատանքների ընթացքը ցույց է տալիս, որ «Ակադեմիական քաղաք»-ի ուղղությամբ մենք բավականին որակյալ նախապատրաստական փուլում ենք, որը նաեւ իրականացման շատ լուրջ հիմքեր է դնում այս մեծածավալ ծրագրի համար»,-ասաց Անդրեասյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ Է

«Խաղաղության խաչմերուկ» նախագծում շատ կարեւոր ուղղություններ են Հայաստանի հասանելիությունը դեպի Հնդկաստան եւ Ծոցի երկրներ: Այս մասին ասել է արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը՝ ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության քննարկման ժամանակ:

«Սա վերաբերում է նաեւ Հայաստանի Հանրապետության նպատակաուղղվածությունը դիվերսիֆիկացնելուն դեպի մեր արտահանման շուկաներ, որը նաեւ պետք է ընդգծել ԵԱՏՄ համատեքստում եւ դեպի Կենտրոնական Ասիա Հայաստանի Հանրապետության հետ հաղորդակցության էլ ավելի սահուն ապահովման առումով», - ասաց ԱԳ փոխնախարարը:

Ինչ վերաբերում է Չաբահար նավահանգստի ինտեգրման նախագծին՝ Կոստանյանը տեղեկացրեց, որ այս պահին գործնական փուլ են մտել եւ վարչապետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը ղեկավարում է էկոնոմիկայի նախարարը:

ՊԵԿ-Ի ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է մայիսի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության իրականացրած հարկային իրավախախտումների կանխման, խափանման եւ բացահայտման ուղղությամբ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները:

22 դեպքով արձանագրվել են առանց համապատասխան հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու՝ ընդհանուր 4,508,210 ՀՀ դրամի ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտումով ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքեր: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 11,000,000 ՀՀ դրամ:

20 դեպքով կազմվել են ապօրինի գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ արձանագրություններ: Ապօրինի ձեռնարկատիրական եկամտի չափը կազմել է 14,627,215 ՀՀ դրամ: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 9,011,663 ՀՀ դրամ:

13 դեպքով արձանագրվել են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու խախտումներ: Արձանագրված խախտումների գումարը կազմում է 12,240,000 ՀՀ դրամ:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«ԴԻՋԻԹԵՔ»-Ը՝ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Աշխարհի ամենամեծ տեխնոլոգիական ցուցահանդեսներից VivaTech 2024-ում այս տարի «ARMENIA» միասնական տաղավարում ներկայացավ նաեւ «Դիջիթեք» տեխնոլոգիական ցուցահանդեսը՝ որպես ԱՏՁՄ նախագիծ:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աջակցությամբ 10 ընկերություններով հայկական պատվիրակությունը «ՀԱՅԱՍՏԱՆ» (ARMENIA) միասնական տաղավարով Փարիզում մասնակցեց Եվրոպայի ամենախոշոր տեխնոլոգիական միջոցառումներից 8-րդ ամենամյա VivaTech միջազգային ցուցահանդեսին: Աշխարհի տարբեր երկրներից 1000-ից ավելի ստարտափներով ու միջազգային հյուրերով ցուցահանդեսում Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության թիմը ներկայացրեց հայկական տեխնոլոգիական ներուժն ու հրավիրեց բոլոր այցելուներին հոկտեմբերի 4-6-ին Երեւան՝ բացահայտելու հայկական առաջատար տեխնոլոգիաները, իսկ հոկտեմբերի 4-7-ը՝ մասնակցելու նաեւ WCIT 2024 / DigiTec-ին՝ մասնակից դառնալու բիզնես շնորհանդեսների, սեմինարների, B2B հանդիպումների՝ «ՄՏՔԻ ՈՒԺԸ. Արհեստական բանականությունը սահմաններից այն կողմ՝ էթիկայի շրջանակներում» խորագրով: «ARMENIA» միասնական տաղավար են այցելել նաեւ Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Հասմիկ Տոլմաջյանը, VivaTech-ի գործադիր տնօրեն Ֆրանսուա Բիտուզեն եւ ԱՏՁՄ-ի թիմի հետ քննարկել տեխնոլոգիական զարգացումների ու նոր հնարավորությունների մասին: ԱՏՁՄ գործադիր Սարգսի Կարապետյանը նշել է, որ Վիվաթեքի մեր մասնակցությունը ցույց տվեց, որ մեր DigiTec տեխնոլոգիական ցուցահանդեսը չի զիջում իր որակի կամ մասնակիցների առումով. «Եթե ավելի կարճ բնութագրեմ՝ «Դիջիթեքն» իր չափերով փոքր տեղական Վիվաթեք է:

Սակայն, մենք եւս նպատակ ունենք ցուցահանդեսը միջազգային դարձնելու, ուստի հաջորդ տարի աշխատելու ենք այդ ուղղությամբ, որպեսզի որակական փոփոխություններ էլ ունենանք: ԱՏՁՄ-ն այս տարի Վիվաթեքում մի քանի առաքելություն ուներ: Նախ «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցների արտահանման հետաքրքիր պայմանավորվածություն ունենք Ֆրանսիայում Հայաստանի դեսպանի հետ, որ հետագայում վստահեմ՝ արդյունքներ կտա: Բացի դրանից VivaTech-ի գործադիր տնօրեն Ֆրանսուա Բիտուզեի հետ պայմանավորվել ենք փորձի փոխանակում անել: Դրանից բացի, նաեւ նշեմ, որ ԱՏՁՄ-ն դուրս է գալիս Հայաստանի սահմաններից ու շատ մոտ ապագայում կունենանք այնպիսի ընկերությունների մեր շարքերում, որոնք մեր երկրում չունեն մասնաճյուղեր, սակայն կա՛մ միտք ունեն Հայաստանում գրասենյակ ունենալ, կա՛մ ունեն մեր տեսլականները համընկնում են», - այցն ամփոփել է Սարգիս Կարապետյանը:

«Դիջիթեք» տեխնոլոգիական ցուցահանդեսի գործադիր տնօրեն Խաչատուր Հակոբյանը նշել է, որ 2023-ին ԱՏՁՄ-ն կազմակերպել է միանգամից 2 ցուցահանդես, որոնցից յուրաքանչյուրում մասնակցել է 120 ընկերություն եւ հյուրընկալվել ավելի քան 100 խոսնակ: Իսկ մինչեւ 2023-ի ավարտը մասնակից ընկերությունները «Դիջիթեքի» շնորհիվ կատարել են 100 միլիոն դրամից ավելի գործարքներ, ինչի մասին եւս պատմել են «Վիվաթեքին» զուգահեռ նեթվորքինգային հարթակներում. «Վիվաթեքի այցելուներին ու տարբեր երկրների ստարտափերներին հատկապես զարմացնում էր մեր հայկական տեխնոլոգիական ամենամեծ ցուցահանդեսի ծավալներն ու հաճելիորեն զարմանում էին ցուցահանդեսի տարբեր տարիների տեսանյութերի կադրերից: Մեր տաղավարում հյուրերի համար տպավորիչ էին նաեւ մեր արդյունքները: Մենք էլ նրանց սիրով հրավիրել ենք հոկտեմբերին գալ Երեւան ու իրենց աչքով տեսնել ու ծանոթանալ հայկական տեխնոլոգիական համայնքին», - փարիզյան այցն ամփոփել է «Դիջիթեք» տեխնոլոգիական ցուցահանդեսի գործադիր տնօրեն Խաչատուր Հակոբյանը:

Հիշեցնենք, որ «Դիջիթեք» տեխնոլոգիական ցուցահանդեսն ամենամյա միջոցառում է, որը 2005 թվականից իրականացնում է Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միությունը (ԱՏՁՄ)՝ համախմբելով եւ արտացոլելով Հայաստանի տեխնոլոգիական ներուժը, նորարարությունն ու հեռանկարները: Ամեն տարի 80,000 այցելուներով ցուցահանդեսը դարձել է համաշխարհային տեխնոլոգիական միտումներին ծանոթանալու հարթակ: «Դիջիթեք» 2024-ն այս տարի կանցկացվի հոկտեմբերի 4-6-ին՝ «Մերիդիան» էքսպոկենտրոնում:

Fastex

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հունիսի 1-ին Պարոնյան 16/2 հասցեում գտնվող Հայաստանի բլոկչեյն էմբասիում տեղի է ունեցել 10-րդ Fastex Meetup-ը: Հանդիպման ընթացքում Cerebrum Intellectus-ի շրջանավարտներն ամփոփել են դասընթացների շրջանակում ձեռք բերված գիտելիքները, ծանոթացել են NFT-ի, Web3–ի, ինչպես նաեւ բիզնես ոլորտի ներկայացուցիչների հետ: Cerebrum Intellectus-ի շրջանավարտները ստացել են Dream Factory-ի Dream փաթեթի եռամսյա բաժանորդագրություն: Մասնակիցները հնարավորություն կունենան դասընթացների ժամանակ ձեռք բերված գիտելիքները կիրառել գործնականում:

Cerebrum Intellectus-ի առաջիկա դասընթացներին մասնակցելու համար գրանցման մեկնարկը նույնպես տրվել է: 10-17 տարեկան պատանիների համար կազմակերպված այս աննախադեպ դասընթացները վարում են փորձառու արվեստագետներ եւ բիզնես ոլորտում գործունեություն ծավալողներ: Հիշեցնենք, որ Cerebrum Intellectus-ում խմբերի բաշխումը կատարվում է ըստ տարիքի:

Երկու ամիս տեւող դասընթացի շրջանակում երիտասարդները հնարավորություն են ստանում ծանոթանալու թվային արվեստի եւ բիզնես ոլորտի նրբություններին, ձեռք բերելու բազում հմտություններ եւ կյանքի կոչելու սեփական գաղափարները:

Fastex-ի տեղեկատվական հանդիպումների շարքը շարունակվում է: Հաջորդ հանդիպման մանրամասները բաց չթողնելու համար անհրաժեշտ է հետեւել Fastex Armenia եւ ftnft.am պաշտոնական էջերին:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տրամադրում է բազմաթիվ հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange փոխանակման հարթակը, Fastex Pay կրիպտո վճարային միջոցը, Fastexverse վիրտուալ 3D իրականությունը եւ ftNFT հարթակը՝ իր ֆիջիթալ տարածքներով:

Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը բոլոր օգտատերերի համար համաշխարհային թվային ֆինանսների զարգացող ոլորտում՝ մշտապես հետեւելով առկա կանոնակարգերին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ-120»

ՄԻՔՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

Մամուլի ասուլիսի բանախոսներն են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի փոխտնօրեն Կարինե Կիրակոսյանը, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը, «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրեն Սարգիս Բալբաբյանը, «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի գործադիր տնօրեն Մարինե Թովմասյանը, «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» ՊՈԱԿ-ի տնօրեն Արսյոմ Նաղդյանը:

Ասուլիսի ընթացքում բանախոսները ներկայացրել են հոբելյանական տարվա ընթացքում իրականացված ծրագրերը: Դրանց իրականացմանը ներգրավված են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության կազմակերպությունները՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբերը, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը, Հայաստանի պետական ֆիլհարմոնիան, ինչպես նաեւ «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամն ու այլ կառույցներ:

Համերգներ՝ Հայաստանում եւ արտերկրում, հյուրախաղեր, մրցույթներ, հրատարակություններ, հանրահռչակմանն ուղղված ծրագրեր, կապիտալ վերանորոգումներ:

Նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ՀՀ վարչապետի որոշմամբ՝ ստեղծվել էր Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի հանձնաժողով, որի նախագահն էր ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը: Հոբելյանական հանձնաժողովը ստացել է տարբեր գաղափարներ եւ առաջարկներ տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրերի մասին, այնուհետեւ, դրանք մանրամասն քննարկելով, հաստատել է վերջնական ծրագիրը, որում ներառվել են 21 հիմնական միջոցառումներ: Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակը պատշաճ կերպով ներկայացնելու համար, ընդհանուր առմամբ, տրամադրվել է 464 մլն դրամ:

«Հոբելյանական ծրագիրը մի քանի կարեւոր ուղղություններ ուներ. առաջինը՝ մեր տարբեր ստեղծագործական խմբերի հյուրախաղերի միջոցով նրա արվեստի ներկայացումն էր տարբեր երկրներում՝ այդպիսով ստեղծելով հնարավորություն՝ ամենահեղինակավոր բեմերում հնչեցնելու Խաչատրյանի արվեստը: Այդ իմաստով փորձել ենք հնարավորինս ընդգրկուն աշխարհագրություն ունենալ: Մյուս կարեւոր ուղղությունը մրցութային ծրագրերն են. Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի մեկնարկն ավանդաբար տրվում է նրա ծննդյան օրը, եւ նախորդ տարի մեծ հանդիսավորությամբ այն իրականացվեց»,- նշել է նախարարը՝ ընդգծելով, որ նաեւ տարբեր փառատոներ են անցկացվել ոչ միայն Հայաստանում, այլեւ ՀՀ սահմաններից դուրս:

Ժաննա Անդրեասյանն առանձնահատուկ կարեւորել է մարզերում իրականացված համերգային ծրագրերը՝ ընդգծելով, որ հոբելյանական տարին նշվել է ոչ միայն արտերկրում եւ Երեւանում. դրա կարեւոր մասն են կազմել մարզային համերգները:

Ժաննա Անդրեասյանը կարեւորել է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դերը հրատարակչական ուղղությամբ, մասնավորապես՝ գիրք-ալբոմի հրատարակությունը, ինչպես նաեւ նրա ստեղծագործությունների նոտային գրականության վերահրատարակումը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը կից գիտամեթոդական խորհրդի յոթերորդ, արտագնա նիստը տեղի է ունեցել Տավուշի մարզում:

Դիլիջանի Գորկու 3/1 հասցեում գտնվող հանրապետական նշանակության հուշարձանի՝ օտարման ոչ ենթակա համարվող Աղասի Խանջյանի ամառանոցի (ՀՀ կառավարության 2007 թ. մարտի 15-ի 385-Ն որոշում, պետ. ցուցիչ՝ 10.3.130) տարածքում կայացած նիստին, բացի գիտամեթոդական խորհրդի անդամներից, ներկա են եղել նաեւ հրավիրված անձինք:

Տեղում ներկայացվել են ՀՀ ճարտարապետների, երկրաբանների, երկրաֆիզիկոսների, կոնստրուկտորների եւ այլ մասնագետների կատարված ուսումնասիրությունների արդյունքները՝ ուղղված հուշարձանի հնարավոր վերականգնմանը: Նիստի ընթացքում հնչել են կարծիքներ՝ հուշարձանը տեղում ամրակայելու, ինչպես նաեւ տեղափոխման եւ վերստեղծման հնարավորության վերաբերյալ մասնագիտական առաջարկներ:

Հաշվի առնելով շինության ներկա վիճակը, տեղազննության արդյունքում ճարտարապետների եւ կոնստրուկտորի ներկայացրած դիտողությունները՝ որոշվել է շարունակել սողանքների ու գրունտների հետ կապված ուսումնասիրությունները եւ դրանց ավարտից հետո նախարարություն ներկայացնել համապատասխան էսքիզային առաջարկ:

ՀԱՎԱՔԱԾՈՒՆ՝ ՏՐԵՏՅԱԿՈՎՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ

Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում տեղի կունենա «Մոսկվա-Երեւան-Մոսկվա. Ռուսական արվեստի թանգարանը (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու)՝ Երեւանում» ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը: Այն նվիրված է Ռուսական արվեստի թանգարանի հիմնադրման 40 եւ թանգարանի հիմնադիր, պրոֆեսոր, բժիշկ, ԽՍՀՄ աշխատանքային հերոս, Մոսկվայի պատվավոր քաղաքացի Արամ Աբրահամյանի ծննդյան 125-ամյակներին:

Ցուցահանդեսը, որում ներկայացված է Ռուսական արվեստի թանգարանի հավաքածուի յուրահատուկ ընտրանին, նպատակ ունի մոսկովյան արվեստասեր հանրությանը ներկայացնելու թանգարանը, բացահայտելու բժիշկ-կոլեկցիոների հավաքածում առկա հայտնի նկարիչների դեռեւս չցուցադրված աշխատանքները: Ցուցադրության 2 սրահները ներառում են բազմաթիվ հայտնի նկարիչների գրաֆիկական եւ գեղարվեստական աշխատանքներ: Մոսկովյան հանրությանը Երեւանի Ռուսական արվեստի թանգարանը ներկայանում է այնպիսի հայտնի անուններով, ինչպիսիք են Կ. Կորովինը, Բ. Գրիգորիեւը, Վ. Սերովը, Ն. Ռերիխը:

Ցուցահանդեսի շրջանակում երկու թանգարանների աշխատանքային համագործակցությամբ հրատարակվել է նաեւ պատկերագիրք, որը գիտահետազոտական աշխատանքի կարեւոր արդյունք է:

Պրոֆեսոր Աբրահամյանը հավաքել է «Արծաթե դարաշրջանի»՝ 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի ինչպես ռուսական, այնպես էլ հայկական կերպարվեստի ստեղծագործություններ: Մեծանուն բժիշկը որոշում է իր հավաքածուն նվիրել Հայաստանին: Արդյունքում՝ 1984 թ. Երեւանում պաշտոնապես այցելուների առջեւ իր դռներն է բացում «Պրոֆ. Ա. Հ. Աբրահամյանի հավաքածու» թանգարանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԽԱՂԸ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ ՆՅՈՒԹ ՏՎԵՑ

Սլովենիայի հավաքականի գլխավոր մարզիչ Մատյաժ Կեկն ամփոփել է Հայաստանի ընտրանու դեմ խաղի արդյունքը:

«Ցանկալի հաղթանակ էր թիմային մթնոլորտի եւ երկրպագուներին ուրախացնելու համար: Այս խաղը վերլուծելու շատ նյութ տվեց: Նույնիսկ այն փաստը, որ մենք խաղում էինք առանց մեկնարկային կազմի մի քանի ֆուտբոլիստների, չի կարող արդարացնել չափազանց շատ սխալները, մենապայքարներում պարտությունները եւ «երկրորդ գնդակի» համար պայքարում պասիվությունը:

Այս խաղը մեզ շատ բան ցույց տվեց: Մենք ստիպված էինք փոխել տակտիկան, բայց պետք է հաղթենք նման խաղերը եւ հաղթեցինք», - նշել է մարզիչը:

ՖՈՒՏԲՈԼԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅՏ

Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Լեւան Կոբիաշվիլին կարեւորում է միասնական հայտը, որով Հայաստանն ու Վրաստանը կդիմեն ՖԻՖԱ-ին՝ 2029 թվականի երիտասարդների աշխարհի առաջնությունը հյուրընկալելու համար:

«Ուրախ եմ այսօր այստեղ լինելու եւ այս կարեւոր նորությունը հայտնելու համար: Մենք եղբայրական պետություններ ենք, պատմական հարեւաններ: Ուրախ եմ, որ միասնական հայտով դիմելու ենք աշխարհի 2029 թվականի առաջնությունը հյուրընկալելու համար», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Կոբիաշվիլին:

Վերջինիս խոսքով՝ ինքը ոչ միայն Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահն է, այլ նաեւ ՈՒԵՖԱ-ի գործկոմի անդամ է, եւ եվրոպական ասոցիացիան ամեն կերպ իր աջակցությունն է հայտնել ՀՖՖ նախաձեռնություններին:

«Երկու երկրներն էլ փորձառու են միջազգային մրցաշարեր հյուրընկալելու առումով: Իսկ թե ինչ է պետք աշխարհի երիտասարդների առաջնության հյուրընկալության համար, ապա կարող եմ ասել, որ շատ կարեւոր են ենթակառուցվածքները: Երկու երկրներիս համար շատ կարեւոր կլինի աշխարհի երիտասարդների առաջնության հյուրընկալումը: Վստահ եմ՝ միասին կկարողանանք համաշխարհային ֆուտբոլը բերել մեր երկրներ»,-ասաց նա:

Հայաստանը եւ Վրաստանը միասնական հայտով կդիմեն ՖԻՖԱ՝ ֆուտբոլի աշխարհի 2029 թվականի երիտասարդների առաջնությունը հյուրընկալելու համար: ՈՒԵՖԱ-ն հաստատել է աջակցությունը Հայաստանի եւ Վրաստանի միասնական հայտին:

Աշխարհի երիտասարդների առաջնության անցկացման վայրը պարզ կլինի 2025 թվականին:

● *Հունիսի 8-ին՝ ժամը 19:30-ին, Բոհեմ թատրոնում տեղի կունենա Ռաֆայել Երանոսյանի՝ «Փահլեւան» մոնոներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես եւ որ լեզվով է իրականացվում ազգային փոfrամասնությանը ղաsկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հաստասությունում:

Անի Մխիթարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու, ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը):
Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից»:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաեւ այն դեպքում, երբ ծնողներից մեկն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրենք են ընտրում իրենց երեխայի ուսուցման լեզուն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հեsաfrfիr է իմանալ՝ երբ է մերժվում կենսաթոշակ նշանակելը:

Սիրան Մնացականյան (43 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Փրկարարական ծառայողների ջանքերով հունիսի 5-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, վերականգնվել է հետիոտնային կամուրջը, որը հնարավոր է դարձրել Սանահին կայարան բնակավայրի բնակիչների տեղաշարժը եւ ապահովել է կապը բնակավայրի հետ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Տարածք	Ջերմաստիճան
Շիրակ	+ 8 + 12 / +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 / +23 + 26
Կոտայքի նախալեռներ	+ 15 + 17 / +28 + 30
Գեղարքունիք	+ 10 + 13 / +21 + 24
Լոռի	+ 9 + 13 / +24 + 27
Տավուշ	+ 15 + 17 / +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 / +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15 + 18 / +28 + 31
Արարատ	+ 16 + 18 / +31 + 33
Արմավիր	+ 16 + 18 / +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 / +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 / +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 / +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 / +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 / +25 + 26
Երեւան	+ 23 + 25 / + 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*